ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 **Ե՞րբ է տեղի ունեցել Գում Գափուի ցույցը.**

1) 1890 թ. հուլիսին
2) 1891 թ. հունիսին
3) 1890 թ. հունիսին
4) 1895 թ. սեպտեմբերին

2 **Հայհեղկոմը վերակազմավորվել է ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝**

1) 1920 թ. դեկտեմբերի 2–ին
2) 1921 թ. ապրիլի 24–ին
3) 1921 թ. մայիսի 21–ին
4) 1921 թ. հունիսի 24–ին

3 **Ե՞րբ սկսեց ձևավորվել առաջին համահայկական թագավորությունը.**

1) Ք. ա. XI դարում
2) Ք. ա. IX դարում
3) Ք. ա. VII դարում
4) Ք. ա. VIII դարում

4 **Ե՞րբ է Կոմիտաս Մամիկոնյանը օծվել հայոց կաթողիկոս.**

1) 608 թ.
2) 614 թ.
3) 618 թ.
4) 615 թ.

5 **Ե՞րբ է տեղի ունեցել Շամքորի ճակատամարտը.**

1) 1827 թ. օգոստոսի 17–ին
2) 1826 թ. սեպտեմբերի 3–ին
3) 1826 թ. սեպտեմբերի 13–ին
4) 1826 թ. սեպտեմբերի 27–ին

6 **Ե՞րբ է հրաժարական տվել ՀՀ առաջին նախագահը.**

1) 1999 թ. մայիսին
2) 1998 թ. մարտին
3) 1998 թ. փետրվարին
4) 1996 թ. սեպտեմբերին

7 Տրդատ II-ը ո՞ր թվականին է ստիպված հեռացել Հռոմեական կայսրության սահմանները.

1) 252 թ.
2) 249 թ.
3) 256 թ.
4) 272 թ.

8 Ե՞րբ է Բաղդադի խալիֆը Աշոտ II–ին ճանաչել Հայաստանի շահնշահ.

1) 920 թ.
2) 918 թ.
3) 922 թ.
4) 921 թ.

9 Որքա՞ն էր Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական կռվող ուժի թիվը 1917 թ. ապրիլի դրությամբ.

1) 232 000
2) 185 000
3) 182 000
4) 158 000

10 Թվարկվածներից ո՞վ ԱՄԿ հիմնադիրներից չէ.

1) Ստեփան Զատիկյանը
2) Շահեն Հարությունյանը
3) Հայկազ Խաչատրյանը
4) Խաչիկ Սաֆարյանը

11 Ո՞վ էր գլխավորում 1547 թ. գաղտնի խորհրդակցության որոշմամբ Եվրոպա մեկնած պատվիրակությունը.

1) Ստեփանոս Աղթամարցին
2) Միքայել Սեբաստացին
3) Ստեփանոս Սալմաստեցին
4) Արգար Թոխաթեցին

12 Որտեղի՞ց է սկիզբ առնում Արածանի գետը.

1) Ծաղկանց լեռներից
2) Սրմանց լեռներից
3) Ծաղկավետ լեռներից
4) Ծովք լճից

13 **Շուշին 1726 թ. գրավելու անհաջող հարձակման ժամանակ որքա՞ն զինվոր կորցրին թուրքերը.**

1) 1300
2) 700
3) 6000
4) 800

14 **Ո՞վ է «Հովհաննես Այվազովսկի» արձանի հեղինակը.**

1) Նորայր Կարգանյան
2) Յուրի Պետրոսյան
3) Արա Սարգսյան
4) Արտաշես Հովսեփյան

15 **Ո՞ր գավառում էր գտնվում Արծափ ամրոցը.**

1) Բագրևանդ
2) Կարնո
3) Արտազ
4) Կոգովիտ

16 **Ի՞նչ լեզվով են գրված արտաշեսյան սահմանաքարերի արձանագրությունները.**

1) լատիներեն
2) հունարեն
3) արամեերեն
4) հայերեն

17 **Ո՞ր քաղաքի հայերին է վերաբերում մեջբերված խոսքը.**
«… հայերը չափազանց քաջ կռվողներ էին … Հայերը բացահայտորեն իրենց նպաստն էին բերում Ռուսաստանին»:

1) Էրզրումի
2) Բայազետի
3) Կարսի
4) Վանի

18 **Ո՞վ է ստորև տրված մեջբերման հեղինակը.**

«Աստվածներից առաջիններն ահեղ էին ու երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը…»:

1) Փավստոս Բուզանդ
2) Ղազար Փարպեցի
3) Մովսես Խորենացի
4) Ագաթանգեղոս

19 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ.**

1) Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևելյան շրջանները և Հայկական լեռնաշխարհն ընդգրկող տարածքը հայտնի է «հնդեվրոպական նախահայրենիք» անունով:
2) Արևմտյան քաղաքակրթության հետ շփումների խորացման արդյունքում հայերին երբեմն կոչում էին Ասիայի եվրոպացիներ:
3) Հայաստանում I դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «բուն հելլենիստական» անունով:
4) Վանի համահայկական պետության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «գործակալներ»:

20 **Արևմտահայերի երկրորդ համագումարում ընտրված մարմինը, որը դիմեց «Արարատյան Հանրապետության» կառավարությանը, կոչվում էր՝**

1) Արևմտահայերի խորհուրդ
2) Արևմտահայ գործադիր մարմին
3) Ազգային գործադիր կոմիտե
4) Արևմտահայ ազգային բյուրո

21 **Թվարկվածներից որո՞նք են Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանքներ.**

ա. Արևելյան Հայաստանը ձեռք բերեց պետական ինքնավարություն:
բ. Հայերը ձեռք բերեցին ազգային կյանքի կազմակերպման ավելի նպաստավոր պայմաններ:
գ. Հայ ժողովուրդը ստացավ քաղաքական ազատ գործունեության իրավունքներ:
դ. Հայերը ձեռք բերեցին անձի և գույքի ապահովություն:
ե. Հայ ժողովուրդն ազատվեց գաղութային և կրոնական ճնշումներից ու հալածանքներից:
զ. Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա կրկին սկսվեց ազգահավաքման գործընթաց:

1) գ, դ, զ
2) ա, դ, ե
3) բ, դ, զ
4) ա, բ, ե

22 **Թվարկվածներից որո՞նք են Կիլիկիայի հայերի և մոնղոլների միջև դաշինքի կնքման իրական պատճառ հանդիսացել.**

ա. Հայերը ցանկանում էին ստեղծել հայ-մոնղոլական դաշինք ընդդեմ խաչակիրների:
բ. Մոնղոլները խոստացան հայերին վերադարձնել մահմեդականների խլած տարածքները և օգնություն ցույց տալ Իկոնիայի սելջուկների հարձակումների ժամանակ:
գ. Հեթանոս մոնղոլները ձգտում էին շահելու քրիստոնյա հայերի համակրանքը, որովհետև թշնամաբար էին տրամադրված մահմեդականների նկատմամբ:
դ. Մոնղոլները խոստանում էին պահպանել Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը:
ե. Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքը և Պաղեստինը, ուստի վստահելի դաշնակցի կարիք ունեին, որպիսին կարող էր լինել Կիլիկյան Հայաստանը:

1) ա, դ
2) դ, ե
3) բ, ե
4) բ, գ

23 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հրահատ III-ի զորքի պարտությունը հայոց բանակից և նահանջը իր երկիր
բ. հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
գ. Մարաստանի Միհրդատ թագավորի ամուսնանալը Տիգրան Մեծի դստեր հետ
դ. Տիգրան Կրտսերի ներկայանալը և իր ծառայություններն առաջարկելը Պոմպեոսին
ե. Սուլլայի բանակի մուտքը Կապադովկիա

1) ե, գ, բ, դ, ա
2) բ, գ, ե, դ, ա
3) ե, բ, գ, ա, դ
4) բ, ե, գ, ա, դ

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. հայկական Թամանյան դիվիզիայի կազմացրվելը
բ. ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Լ. Բերիայի ձերբակալությունը
գ. Նյու Յորքում Հայկական համաշխարհային կոնգրեսի գումարումը
դ. խորհրդային կառավարության պաշտոնական հայտարարությունը «Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ» չունենալու մասին
ե. Հայերի զանգվածային արտաքսումը Ալթայի երկրամաս
զ. Արմենակ Խանփերյանցի զնդակահարությունը

1) զ
2) բ
3) ա
4) դ

25 **Կատարել համապատասխանեցում.**

Մականուն

1. Վարդգես
2. Փարամազ
3. Վարդան
4. Իշխան
5. Կոմս

Անուն–ազգանուն

ա. Հովսեփ Արղության
բ. Վահան Փափազյան
գ. Սարգիս Մեհրաբյան
դ. Հակոբ Կոտոյան
ե. Հովհաննես Սերենկյուլյան
զ. Մատթեոս Սարգսյան

1) 1–դ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–բ
2) 1–ե, 2–բ, 3–գ, 4–ա, 5–զ
3) 1–դ, 2–ե, 3–գ, 4–ա, 5–զ
4) 1–ե, 2–զ, 3–գ, 4–ա, 5–բ

26 **Կատարել համապատասխանեցում.**

ա. մոնղոլական խան, որը ճնշեց հայ–վրացական ապստամբությունը
բ. մոնղոլական զորահրամանատար, որը առաջնորդում էր մոնղոլական բանակի գլխավոր արշավանքն Այսրկովկաս
գ. Վահրամյանների իշխանության հիմնադրի եղբայրը
դ. Խաչենի տիրակալը, որը մահապատժի ենթարկվեց մոնղոլների դեմ ապստամբելու համար
ե. ամիրսպասալար Զաքարեի թոռը, որը մահապատժի ենթարկվեց մոնղոլների դեմ ապստամբելու համար

1. Սարգիս Զաքարյան
2. Չարմաղան
3. Զաքարե Զաքարյան
4. Հասան–Ջալալ
5. Հուլավու
6. Ստեփանոս

1) ա–5, բ–2, գ–3, դ–4, ե–1
2) ա–2, բ–5, գ–3, դ–6, ե–1
3) ա–5, բ–2, գ–1, դ–4, ե–3
4) ա–2, բ–5, գ–1, դ–6, ե–3

27 **Ըստ Փարիզի խաղաղության խորհրդաժողովի Տասի խորհրդին ներկայացված հայկական համատեղ հուշագրի՝ ո՞ր տարածքներն էին ներառվելու Միացյալ հայկական անկախ պետության կազմի մեջ.**

1) Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով, Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները
2) Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 5 սանջակները, Ղարաբաղն ու Զանգեզուրը
3) Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով, Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները, Կիլիկիայի 4 սանջակները
4) Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները, Կիլիկիայի 5 սանջակները, Հայաստանի Հանրապետությունը՝ առանց Ղարաբաղի

28 **Ո՞ր թվականից է գահակալել Արշամ Երվանդականը.**

1) Ք. ա. մոտ 240 թ.
2) Ք. ա. մոտ 220 թ.
3) Ք. ա. մոտ 260 թ.
4) Ք. ա. մոտ 230 թ.

29 **Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն ե՞րբ է ՄԱԿ–ի ամբիոնից կոչ արել քննարկելու Հայկական հարցը.**

1) 1967 թ. հունիսին
2) 1970 թ. ապրիլին
3) 1965 թ. ապրիլին
4) 1965 թ. հոկտեմբերին

30 **Ո՞վ էր Կեսարիայի շրջանում հայտնի «Մեծ չելլոյի» առաջնորդը.**

1) Արամ Աչըգբաշյանը
2) Թորոս Ծառուկյանը
3) Մեծն Մուրադը
4) Մարգար Վարժապետը

31 **Ո՞վ է հաջորդել Օշին թագավորին.**

1) Լևոն V–ը
2) Գվիդոն Լուսինյանը
3) Լևոն IV–ը
4) Հեթում II–ը

32 Հայոց արքան ո՞ւմ է ասել ստորև բերված խոսքերը.

«Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:

1) Վասիլ II-ին
2) Դիոգենես IV-ին
3) Հովհաննես Կոմնենոսին
4) Կոստանդին Մոնոմախին

33 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

«Բոլոր հայ աշխատավորները պետք է գիտենան, որ ներգաղթի խնդրում մենք պետք է ղեկավարվենք դասակարգային սկզբունքով, այսինքն՝ պիտի ներգրավենք միմիայն աշխատավոր տարրեր՝ բանվորներ և գյուղացիներ»:

1) Ա. Մյասնիկյանը
2) Ս. Տեր–Գաբրիելյանը
3) Ս. Լուկաշինը
4) Ա. Ամատունին

34 Ո՞ւմ ընդունած կոչից է մեջբերված հատվածը.

«Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրավորական տմարդությունը վերջապես ազդեց հայ ժողովրդի հոգու վրա: Այժմ, գոնե, պարզվում է, որ մենք մեր հույսը պիտի կապենք մեր խիզախության հետ: … Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում ու ժամանակներում»:

1) Հայկական կորպուսի հրամանատարի
2) Հայաստանի ապահովության խորհրդի
3) Արևմտահայերի ազգային խորհրդի
4) Երևանի Հայոց ազգային խորհրդի

35 Խաչակիր մատենագիրները Կիլիկիայի հայկական պետության ժամանակաշրջանում այս երկրին ի՞նչ անվանումներ են տվել.

1) Կիլիկյան Հայաստան
2) Փոքր Հայք
3) Մեծ Հայք
4) Հայոց աշխարհ
5) Հայաստան

36 Գտնել տերմինը ճիշտ բնութագրող գործողությունները.

Ըստ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի՝ *«ցեղասպանություն են համարվում որևէ ազգային, ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման նպատակով իրականացվող հետևյալ գործողությունները.*

1) խմբի անդամներին բարոյական վնաս հասցնելը
2) խմբի համար ոչ կանխամտածված անտանելի կենսապայմանների ստեղծումը
3) երեխաների կամավոր հանձնումը մարդկային մի խմբից մյուսին
4) խմբի ներսում ծննդաբերության կանխմանն ուղղված միջոցառումները
5) խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածք կամ մտավոր խանգարում հասցնելը

37 Գտնել սխալ պատասխանները.
Ի՞նչ հետևանքներ ունեցավ Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում.

1) Երկրում վերջ տրվեց բոլշևիկների մենիշխանությանը:
2) Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և հայրենիք վերադարձնելու գործին:
3) Այն սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա:
4) Երկրում սահմանվեց ներքին առևտրի և գների մենաշնորհ:
5) Ապստամբներին համաներում շնորհվեց:
6) Վճռական քայլեր արվեցին երկրի սոցիալ–տնտեսական վիճակը բարելավելու համար:

38 Իրադարձությունների տրված պատճառահետևանքային կապերից որո՞նք են ճիշտ.

1) Արտաշատի հայ–հռոմեական պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքը կորցրեց իր բոլոր արտաքին նվաճումները:
2) Վրաց թագավոր Փարսմանը հռոմեացիներին իր հավատարմությունը ցույց տալու համար սպանեց իր որդի Հռադամիզդին:
3) Արտաշատում Ք. ա. 94 թ. կնքված հայ–պոնտական պայմանագրի համաձայն՝ Հայաստանը ձեռք բերեց Ծոփքն ու Կորդուքը:
4) Արտաշատում Ք. ա. 54 թ. կնքված հայ–պարթևական պայմանագրի համաձայն՝ Պարթևստանը և Հայաստանը հռոմեացիներին դուրս մղեցին Կապադովկիայից:
5) Մծբինի պայմանագրի համաձայն՝ պարսից Ներսեհ թագավորը ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը:

39 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարն ընդունեց ԱԽԴՍՀ Սահմանադրությունը և որոշեց մյուս խորհրդային հանրապետությունների հետ միավորվել ԽՍՀՄ–ի կազմում:
2) ՀՍԽՀ իշխանությունները դեմ էին Անդրդաշնության ստեղծմանը, որովհետև այն հնարավորություն չէր տա երկիրը ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու:
3) Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանին և իր կողմնակիցները կարծում էին, որ դաշնության կազմավորման համար չկային իրական նախադրյալներ, և այն պարտադրված էր Մոսկվայի իշխանությունների կողմից:
4) ԱԽԴՍՀ–ն գոյատևել է մինչև 1935 թվականը:
5) ԽՍՀՄ–ը իրականում ոչ թե դաշնային միություն էր, այլ համադաշնություն:
6) «Ստալինյան ինքնավարացման ծրագրին» հավանություն տվեցին խորհրդային բոլոր հանրապետությունների կոմկուսները:

40 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Ավարայրի ճակատամարտում հայկական երրորդ գնդի հրամանատարը Թաթուլ Վանանդեցին էր:
2) Վասակ Սյունին, Հռոմից օգնություն չստանալով, ծրագրել էր հաշտվել պարսից արքունիքի հետ:
3) Ղևոնդ երեցը Խաղխաղի ճակատամարտի նախօրեին մկրտեց մինչ այդ չմկրտված զինվորներին:
4) Պարսից արքան իր մոտ պատանդ է պահել բդեշխ Աշուշային և Վասակ Սյունու երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին:
5) Հայ նախարարները Հազկերտ I–ի պահանջով Տիզբոն են ժամանել 450 թ. ապրիլին:
6) Ավարայրի ճակատամարտում հայոց զորքի թիվը երկու անգամ պակաս էր պարսիկների զորքից:

41 **Թվարկվածներից ո՞րն է խախտում իրադարձությունների տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու գահակալման ավարտը
2) Հայոց կաթողիկոսի նստավայրի տեղափոխվելը Հռոմկլա
3) Մլեհի կառավարման սկիզբը
4) Միրիոկեֆալոնի ճակատամարտը
5) Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից
6) Անիի ազատագրումը Զաքարյանների գլխավորած հայ-վրացական զորքի կողմից

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) ՀՅԴ ծրագրի տպագրումը «Դրոշակ»-ում
2) «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը Թավրիզում
3) Սարգիս Կուկունյանի ջոկատի անցումը ռուս–թուրքական սահմանը
4) Արաբոյի անդամակցելը «Դաշնակցություն» կուսակցությանը
5) Կարինի և Տրապիզոնի հնչակյան մասնաճյուղերի ստեղծումը

43 **Պաշտոնները համապատասխանեցնել գործիչների անուններին.**

Ա. Արթուր Մկրտչյան
Բ. Սուրեն Հարությունյան
Գ. Վազգեն Մանուկյան
Դ. Աղասի Խանջյան
Ե. Գագիկ Հարությունյան

Ա	Բ	Գ	Դ	Ե

1) ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ
2) ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
3) ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ
4) Հանրային խորհրդի նախագահ
5) ԼՂՀ վարչապետ
6) ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար

44 **Արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

Ա. Արտավազդ II
Բ. Արտաշես II
Գ. Արտաշես I
Դ. Արտավազդ I
Ե. Տիգրան IV

Ա	Բ	Գ	Դ	Ե

1) Արարատյան դաշտում կառուցեց նոր մայրաքաղաք:
2) Զոհվեց Մեծ Հայքի տարածք ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ մղված ճակատամարտում:
3) Մահապատժի ենթարկվեց Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի կարգադրությամբ:
4) Պարթևստանի դեմ պայքարում պահպանեց Հայաստանի անկախությունը, բայց իր եղբորորդուն ստիպված պատանդ տվեց պարթևներին:
5) Հռոմի դաշնակից Ատրպատականի թագավորությունը միացրեց հայոց թագավորությանը:
6) Կառուցեց նոր քաղաք, որը գտնվում էր Ախուրյան գետի ափին:

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Կովկասյան ճակատում 1918 թ. մայիսի սկզբի դրությամբ ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը հասնում էր 42-43 հազարի:
2) Անդրկոմիսարիատը Տրապիզոնի բանակցությունների արդյունքում ճանաչել է Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանները:
3) Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում պատերազմը 1918 թ. ձմռանը թուրք–անդրկովկասյանից վերաճել է թուրք–հայկականի:
4) Արամ Մանուկյանը 1918 թ. մարտի 24-ին հաստատվել է Երևանի նահանգի դիկտատոր:
5) Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուց և անկախ հռչակելուց հետո երկրամասում հաստատված նոր կառավարությունը գլխավորում էր Գեգեչկորին:
6) Ախալքալաքում դեռ 1918 թ. հունվարին ստեղծվել էր Հայկական կորպուսի հրաձգային գունդ:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
բ. Պետրոս Հայկազունու և Արսեն Կրիտյանի գլխավորությամբ ստեղծված ազատագրական խմբակը կոչվում էր «Միություն ի փրկություն»:
գ. Ցարիզմի հակահայ քաղաքականության դեմ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր «Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե»:
դ. Արևմտահայերի Ազգային սահմանադրության համաձայն՝ ստեղծվող Ազգային ժողովը հայտնի էր նաև «Երեցների ժողով» անունով:
ե. Քրդական կառավարական ջոկատները հայտնի էին «չելլոներ» անունով:
զ. Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնը կոչվում էր Կովկասի փոխարքա:
է. Արևմտահայ զորաբաժնի ձևավորման համար ստեղծված գործադիր նոր մարմինը կոչվում էր Հայաստանի ապահովության խորհուրդ:

1) ա, գ, դ
2) գ, զ, է
3) ա, բ, է
4) բ, դ, ե

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Կիլիկյան Հայաստանի բանակում հատուկ տեղ զբաղեցնող հոգևոր–ասպետական կազմակերպություններից մեկը կոչվում էր «Հիվանդախնամների միաբանություն»:
բ. Հայաստանի հարավում՝ Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ–Արմենների աթաբեկություն:
գ. Կիլիկյան Հայաստանում պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհազոր:
դ. Միջնադարում քաղաքների հարկահանությանը, առևտրին ու արհեստներին, շուկաներին հետևող պաշտոնյան կոչվում էր սպասալար:
ե. Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր:
զ. Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են պարոնտեր:
է. Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:
ը. Միջնադարում քաղաքի կառավարիչը կոչվում էր շահապ:

1) ա, դ, է
2) բ, դ, է
3) ա, գ, ե
4) բ, զ, ը

48 **Թվարկվածներից որո՞նք 1890–ական թվականների հայերի զանգվածային կոտորածների հետևանքներ չեն.**

ա. 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, 200 հազարը՝ Եվրոպա և Ամերիկա:
բ. Տեղահանված հայերը բնակեցվեցին Միջագետքի ապահով շրջաններում:
գ. Ոչնչացվեցին 20 հազարից ավելի հայկական ձեռագրեր և հնատիպ գրքեր:
դ. Սասունում կոտորվեց 10 հազար խաղաղ հայ բնակչություն:
ե. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:
զ. Արևմտահայ բազմաթիվ գավառներ հայաթափվեցին և բնակեցվեցին քրդերով ու թուրքերով:
է. Գերմանական կառավարությունը ստանձնեց որբ մնացած հայ երեխաների խնամքը:
ը. Ոչնչացվեց մոտ 300 հազար հայ:

1) բ, դ, ե, ը
2) ա, զ, ը
3) բ, գ, ե, է
4) գ, դ, է

49 **Ստորև թվարկված պատմական դեպքերի ու իրադարձությունների հետևանքներից որո՞նք են սխալ.**

ա. Դեպի Բաբելոն, Պարսից ծոց և Միջերկրական ծով կատարած հաղթարշավների հետևանքով Սարդուրի II–ը չորս կողմից շրջափակման մեջ վերցրեց Ասորեստանը:
բ. Ք. ա. VIII դ. վերջերին Ասորեստանը վերականգնեց իր դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության մրցակիցն Առաջավոր Ասիայում:
գ. Արտաշես I–ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության մեջ:
դ. Վանի թագավորության և սկյութների դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:
ե. Մագնեսիայի ճակատամարտում պարթևական զորքերի պարտությունը նպաստեց Արևելքում ուժերի հարաբերակցության փոփոխությանը:
զ. Կիմերների հարձակման հետևանքով Վանի թագավորությունը հայտնվեց երկու ճակատով հարձակվող թշնամիների օղակում:
է. Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության ռազմական հեղինակությունը:

1) ա, դ, ե
2) բ, գ, է
3) ա, զ, է
4) բ, դ, ե

50 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Լենինականի հէկի գործարկումը
բ. Ստալինի 50–ամյակի նշումը, անձի պաշտամունքի բացահայտ դառնալը
գ. Երևանի կաուչուկի գործարանի շահագործման հանձնվելը
դ. գյուղմիասհարկի շրջանառության մեջ մտնելը
ե. Խորեն Մուրադբեգյանի ընտրվելը Ամենայն հայոց կաթողիկոս
զ. Հայաստանի կերպարվեստի թանգարանի կազմակերպումը
է. Սովի պատճառով և ապրուստի միջոցներ հայթայթելու համար Սևանա լճի ավազանից հազարավոր ընտանիքների հեռանալը
ը. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
թ. Հայաստանում գավառային բաժանման վերացումը և շրջանների ստեղծումը
ժ. Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության ստեղծումը

1) դ, ժ, ը, ե, ա, բ, է, գ, զ, թ
2) ժ, ը, դ, ա, բ, է, ե, թ, զ, գ
3) ժ, դ, ը, ա, բ, թ, ե, է, զ, գ
4) դ, ժ, ա, ը, ե, թ, բ, է, գ, զ

51 **Ո՞ր իրադարձությունն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Երևանի գրավումը շահ Աբասի կողմից
բ. Բաղդադի գրավումը թուրքերի կողմից և թուրք–պարսկական պատերազմների ավարտը
գ. շահ Աբասի հարձակումը և Թավրիզի գրավումը
դ. շահ Աբասի հրամանով հայ բնակչության տեղահանության սկիզբը
ե. շահ Աբասի գահակալության սկիզբը
զ. Նախիջևանի գրավումը շահ Աբասի կողմից
է. Կասրե Շիրինի պայմանագրի կնքումը
ը. շահ Աբասի կողմից Այսրկովկասի ու Ատրպատականի զիջումը օսմանցիներին
թ. շահ Աբասի մուտքը Ջուղա
ժ. Ամասիայի հաշտության կնքումը Սեֆյան և Օսմանյան տերությունների միջև

1) ա
2) թ
3) դ
4) զ

52 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Արգիշտի II–ի գահակալության սկիզբը
բ. Սարգոն II–ի կողմից Խալդիի գլխավոր տաճարի թալանումը
գ. Խուկանայի և խեթերի թագավորի միջև պայմանագրի կնքումը
դ. Վանի թագավորության գրային բարեփոխումը
ե. Էրեբունի ամրոցի հիմնադրումը
զ. Կարանի թագավորի դիմադրելը խեթերի արշավանքներին
է. «Ուրարտու»–ի վերջին հիշատակումը ասուրա–բաբելական արձանագրություններում
ը. Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
թ. «Նաիրի» երկրանվան հիշատակումը Սալմանասար I թագավորի կողմից

1) ը
2) դ
3) բ
4) ե

53 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ

1. 1920 թ. նոյեմբերի 30	5. 1921 թ. հուլիսի 13
2. 1921 թ. հունիսի 1	6. 1921 թ. հունիսի 12
3. 1921 թ. փետրվարի 25	7. 1921 թ. փետրվարի 26
4. 1920 թ. դեկտեմբերի 25	8. 1921 թ. հունիսի 30

Իրադարձություն

ա. «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին» ՀՍԽՀ ԺԿԽ–ի հայտարարության հրապարակումը
բ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Թիֆլիս
գ. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Սիսիան
դ. Ինքնավար Սյունիքի հռչակումը
ե. Կարմիր բանակի զորամասերի մուտքը Մեղրի
զ. Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունը՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու մասին»
է. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն
ը. Մոսկվայի ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսի սկիզբը
թ. մեծ պետությունների Լոնդոնի կոնֆերանսի սկիզբը

1) 1–զ, 2–է, 3–բ, 4–դ, 5–ե, 6–ա, 7–ը, 8–գ
2) 1–ա, 2–գ, 3–թ, 4–դ, 5–ե, 6–զ, 7–ը, 8–է
3) 1–զ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–է, 6–ա, 7–թ, 8–գ
4) 1–ա, 2–է, 3–բ, 4–դ, 5–գ, 6–զ, 7–թ, 8–ե

54 **Բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. 1992 թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:
բ. 1993 թ. մայիսի 18–ին հայ ազատամարտիկները մտան Լաչին:
գ. 2007 թ. հունվարի 19–ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը:
դ. 1989 թ. հունվարին ԼՂԻՄ-ում ստեղծվել է Հատուկ կառավարման կոմիտեն:
ե. 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ-ում ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտեն՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:
զ. 1988 թ. փետրվարի 26-ին ստեղծվել է «Ղարաբաղ» կոմիտեն:
է. 2009 թ. հոկտեմբերի 10–ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները:
ը. 2015 թ. հունվարից ՀՀ–ն Եվրոպայի խորհրդի (ԵԽ) լիիրավ անդամ է:

1) բ, գ, դ, է
2) ա, բ, զ, ը
3) գ, զ, ե, է
4) ա, դ, ե, ը

55 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

ա. Արցախի ազատագրական ուժերը 1724 թ. թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի մասին պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
բ. Ըստ 1724 թ. Կ.Պոլսում կնքված պայմանագրի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվել է գրաված տարածքների փոխանակում:
գ. 1828 թ. փետրվարի 10–ին Թուրքմենչայ գյուղում կնքվել է ռուս–պարսկական հաշտության պայմանագիր:
դ. Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 25–ին կնքված համաձայնագրով Ֆրանսիան Թուրքիայից ստացել է Կիպրոս կղզին:
ե. Սան Ստեֆանոյի պայմանագրի 16–րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվել է Արևմտյան Հայաստանում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:
զ. 1878 թ. հունիսի 1–ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթացել է Մեծ Բրիտանիայի մշակած սցենարով:
է. 1914 թ. հունվարի 26–ի ռուս–թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվել է միացյալ ինքնավար հայկական տարածք:
ը. Սայքս–Պիկոյի համաձայնագրով Օսմանյան կայսրության տարածքները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջև:
թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով Բայազետը վերադարձվել է Թուրքիային:

1) բ, դ, ը, թ
2) ա, դ, ե, է
3) գ, զ, է, ը
4) ա, գ, ե, զ

56 **Թվարկված բարեփոխումներից առանձնացնել երեքը, որոնք իրականացրել է Պապ թագավորը.**

ա. Ի կատարումն Աշտիշատի ժողովի որոշման՝ Պապի հրամանով կառուցվել են վանքեր, հիվանդանոցներ, կուսանոցներ և ապաստաններ:
բ. Պապը մտցրել է եկեղեցուն վճարվող պտղի և տասանորդների կարգ:
գ. Պապի հրամանով փակվել են կուսանոցներն ու այրիների ապաստանները, կույսերին ու այրի կանանց թույլատրվել է ամուսնանալ:
դ. Հօգուտ արքունիքի՝ Պապը բռնագրավել է եկեղեցապատկան հողերի մեծ մասը, սակայն ավելացրել է եկեղեցուն վճարվող տասանորդ հարկի չափաբաժինը:
ե. Պապը հոգևորականների եղբայրներին, զավակներին ու ազգականներին պարտադրել է պետական ծառայություն կատարել:
զ. Հայոց կաթողիկոսի թեկնածու Ներսես Մեծին Պապը թույլ չի տվել մեկնելու Կեսարիա, այլ նա կաթողիկոս է ձեռնադրվել և օծվել Հայաստանում, որով էլ հաստատվել է Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնագլխությունը:
է. Հօգուտ արքունիքի՝ Պապը եկեղեցուց կտրել է դեռևս Տրդատ Մեծի տված հողի մեծ մասը:

1) ա, բ, դ
2) գ, զ, է
3) բ, ե, զ
4) գ, ե, է

57 **Կատարել իրադարձությունների և տարեթվերի համապատասխանեցում.**

ա. Ակցիումի ծովային ճակատամարտը
բ. Վաղարշ I Արշակունու գահակալման սկիզբը Մեծ Հայքում
գ. Կորբուլոնի լեգեոնների ներխուժումը Մեծ Հայք
դ. Վաղարշ II-ի գահակալման ավարտը Մեծ Հայքում
ե. Սանատրուկի գահակալման ավարտը
զ. Սասանյանների հաստատումը պարսից գահին
է. Բակուր Արշակունու գահընկեց լինելը և Հռոմ տարվելը
ը. Վաղարշ I Արշակունու գահակալման սկիզբը Պարթևստանում
թ. Հռանդեայի պայմանագրի կնքումը

1. Ք. ա. 31 թ.	6. 117 թ.
2. 64 թ.	7. 60 թ.
3. 51 թ.	8. 198 թ.
4. 110 թ.	9. 58 թ.
5. 226 թ.	10. 163 թ.

1) ա–1, բ–3, գ–9, դ–8, ե–10, զ–5, է–7, ը–6, թ–2
2) ա–9, բ–3, գ–2, դ–10, ե–4, զ–5, է–8, ը–6, թ–7
3) ա–1, բ–6, գ–9, դ–8, ե–4, զ–5, է–10, ը–3, թ–2
4) ա–1, բ–6, գ–7, դ–5, ե–4, զ–8, է–10, ը–3, թ–2

58 **Տրված բացատրություններից որո՞նք են սխալ արտահայտում տրված հասկացությունների բովանդակությունը.**

1) Հայկական հարցի լուծմանը նպաստելու նպատակով Թիֆլիսում ձևավորված համազգային կազմակերպությունը կոչվել է Հայոց ազգային կենտրոնական բյուրո:
2) ԽՍՀՄ կառավարությանն առընթեր կազմակերպված մարմինը կոչվել է Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:
3) Արևելահայերի Հայոց ազգային համախորհրդակցության որոշմամբ ձևավորված օրենսդիր մարմինը կոչվել է Ազգային ժողով:
4) Փարիզի խաղաղության խորհրդաժողովում արևմտահայերի շահերը ներկայացնող մարմինը կոչվում էր Ազգային պատվիրակություն:
5) Քեմալական ազգայնամոլական շարժման նպատակները ձևակերպած փաստաթուղթը կոչվում էր «Թուրքական ազգային ծրագիր»:
6) Հայկական հարցի լուծմանը նպաստելու նպատակով Թիֆլիսում ձևավորված համազգային կազմակերպությունը կոչվել է Արևելահայ ազգային խորհուրդ:
7) Հայոց պահանջատիրության հարցը պաշտպանելու նպատակով ՀՅԴ կողմից ԱՄՆ-ում ձևավորված կառույցը կոչվում է Հայկական ազգային կոմիտե:
8) 1917 թ. նոյեմբերին ստեղծված հայկական զորամիավորումը կոչվում էր Առանձին հայկական հարվածող զորամաս:
9) Արցախյան հիմնախնդրի լուծման նպատակով ԵԱՀԿ ձևաչափով և Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համանախագահությամբ ստեղծված կառույցը կոչվում է ԵԱՀԿ Մինսկի խումբ:

59 **Գտնել սխալ պատասխանները.**
Օտարների կողմից Հայաստանն անվանվել է՝

1) Սոմխեթի
2) Հայասա
3) Բիայնիլի
4) Արմինա
5) Հայք
6) Ուրարտու
7) Հայաստան
8) Հարմինույա

60 **Գտնել ճիշտ պատասխանները.**

1920 թ. սեպտեմբերի 18–ին Բաքվում ընդունված բանաձև–փաստաթուղթը վտանգավոր էր Հայաստանի համար, որովհետև՝

1) առաջարկվում էր քեմալականների ռազմարշավի միջոցով նպաստել Հայաստանի խորհրդայնացմանը:
2) ենթադրվում էր բոլոր միջոցներով օգնել Անտանտին:
3) ստեղծվում էր վրաց-ադրբեջանական հակահայկական համագործակցություն:
4) այն ամբողջությամբ ուղղված էր Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի դեմ:
5) Ռուսաստանից պահանջվում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին:
6) նախատեսում էր ադրբեջանական զորքը Հայաստան մտցնելով՝ կանխել հայ-ռուսական համագործակցությունը:
7) Ռուսաստանից պահանջվում էր «թուրք–հայկական կոտորածները» կանխելու պատրվակով որպես փրկարար և հաշտարար մտնել Հայաստան և հաստատել խորհրդային վարչակարգ:
8) դրանով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել Հայաստանին խուսափելու խորհրդայնացումից:

61 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառահետևանքային կապեր.**

1) Հուստինիանոս I-ի 536 թ. օրենքի կիրառման արդյունքում ստեղծվեցին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը:
2) Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
3) IX դարի վերջին Խլաթի ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայ–բյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:
4) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը զարգացած ավատատիրության շրջանում գոյություն ունեցող ավատատիրական մասնատվածությունն ու իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:
5) Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում պարթևների դիրքերի թուլացումն էր:
6) Գյուտ կաթողիկոսի՝ Տիզբոն մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
7) Վարդան Կրտսերի ապստամբության արդյունք էր Հայոց Արևելից կողմերում ու հարակից տարածքներում հայկական թագավորության ստեղծումը:
8) Խաղամախյայի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
9) Հայ–վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:

62 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Հայկական 76–րդ լեռնահրաձգային դիվիզիան, որ կազմավորվել էր դեռ 1920–1922 թթ. Հայաստանում, հատկապես աչքի ընկավ Ստալինգրադի ճակատամարտում և վերակազմավորվեց 51–րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի:
2) 408–րդ հայկական դիվիզիան Կերչի մոտ մղված մարտերից հետո մասնակցեց նաև Բեռլինի գրավման օպերացիային:
3) Հայ ժողովրդի ավելի քան 60 000 զավակներ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների կազմում:
4) Կուրսկի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ օդաչու Սերգեյ Բուռնազյանը:
5) Հայրենական մեծ պատերազմի 64 հայ գեներալներից 6–ը հետագայում դարձել են մարշալներ:
6) Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով պարգևատրված 27 հայ ռազմիկներ դարձել են զինվորական այդ շքանշանի լրիվ ասպետներ:
7) Խորհրդա–ֆիննական պատերազմում հայերից 4 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:
8) ԽՍՀՄ հերոսներ Հունան Ավետիսյանը և Սուրեն Առաքելյանը կռվել են 261-րդ հրաձգային դիվիզիայի կազմում:

63 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արմավիր մայրաքաղաքը:
2) Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը սկսվում է Մեծ Արարատից:
3) Հույն մատենագիր Հիպպոլիտիսը 234–235 թթ. գրած «Ժամանակագրություն» աշխատությունում հայերին հիշատակել է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում:
4) Վանի թագավորության շրջանից հայտնի մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում, այն բաղկացած էր շուրջ 300 նշաններից:
5) Վանա լիճը ծովի մակերևույթից ունի 1820 մ բարձրություն և չորս կղզի՝ Աղթամար, Կտուց, Լիմ և Արտեր:
6) Վան և Ուրմիա լճերի միջև Արամ անունով երկիր հիշատակվել է դեռևս Ք. ա. XXIII դարում:
7) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492թ.) համարվել է Հայոց մեծ թվականի սկիզբը:
8) ՀՀ–ի՝ բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3925 մ բարձրություն:

64 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագրում.**

1) Հայոց թագավորի ընտրությունը պետք է կատարեր ռուսական կայսրը, իսկ օծումը պետք է տեղի ունենար Էջմիածնում:
2) Հայաստանի մայրաքաղաք էր դառնալու Վաղարշապատը կամ Անին:
3) Առաջարկվում էր Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
4) Կասպից ծովի ափին Հայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ:
5) Հակաթուրքական պայքարի մեջ անհրաժեշտ էր ընդգրկել նաև Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք:
6) Հերակլ II–ը կարող էր հայ, ռուս և վրացի զինվորներ ուղարկել Երևան և գահընկեց անել տեղի խանին:
7) Հայաստանի կառավարությունը Մոսկվայում պետք է ունենար իր դեսպանը:
8) Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնար Հայաստանի թագավոր:

65 **Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Ասորեստանի արքայի որդիներ Սարասարի և Ադրամելեքի փախուստը Հայաստան
2) Նինվեի գրավումը դաշնակից զորքերի կողմից
3) Պարույր Հայկազունու թագադրվելը և ճանաչվելը Հայաստանի թագավոր
4) Սարդուրի III–ի հիշատակվելը ասորեստանյան արձանագրություններում
5) Տիգրան Երվանդյանի կողմից Աժդահակին սպանելը
6) զորավար Վահումիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
7) հունական 10–հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
8) Վահագն Երվանդյանի գահակալման սկիզբը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Համբարձում Լիմոնճյանի կողմից հայկական նոր ձայնագրության ստեղծումը
2) Շուշիի թեմական դպրոցի բացումը
3) Աղաբաբյան դպրոցի հիմնումը
4) Երևանի բերդում «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը հեղինակի ներկայությամբ
5) Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության առաջին տպագրությունը
6) «Որոգայթ փառաց» գրքի հրատարակումը Մադրասում
7) Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) մեզ հասած՝ մանրանկարներով զարդարված առաջին ամբողջական ձեռագրի ստեղծումը
2) «Արյան լճի» մոտ տեղի ունեցած ճակատամարտը
3) Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու կառավարման սկիզբը
4) Բուղայի զորքի մուտքը Վիրք
5) Բագրատունիների նստավայրի տեղափոխումը Բագարան
6) Աշոտ Արծրունու գլխավորությամբ Նկան ամրոցի հերոսական դիմադրությունը արաբներին
7) Հովհանի նշանակվելը «Լեռան» կառավարիչ

68 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. ժամանակակից օրգանական լուսաքիմիայի հայրը
Բ. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրը
Գ. հայ ազգային բնանկարի հիմնադիրը
Դ. ժամանակակից երկրաքիմիա գիտաճյուղի հիմնադիրը
Ե. արևելահայ երգահանային դպրոցի հիմնադիրը
Զ. հայկական առաջին մշտական թատերական խմբի ղեկավարը
Է. նշանավոր արևելագետ

1) Տիգրան Չուխաճյան
2) Զակոմո Չամչյան
3) Պետրոս Մաղաքյան
4) Հովսեփ Օրբելի
5) Քրիստափոր Կարա-Մուրզա
6) Գևորգ Բաշինջաղյան
7) Լևոն Օրբելի
8) Անդրեաս Արծրունի

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Ներսեհ Կամսարական
Բ. Արտավան Արշակունի
Գ. Մուշեղ Մամիկոնյան
Դ. Հովհաննես Արշակունի
Ե. Համազասպ Մամիկոնյան
Զ. Արտավազդ Մամիկոնյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

1) Նրա օրոք կառուցվել է Թալինի նշանավոր եկեղեցին։
2) Զախջախել է Տարոն ներխուժած արաբական ջոկատը և ամրացել Արտագերս ամրոցում։
3) Հայ պատմիչի բնութագրմամբ՝ նա առաքինի, ընթերցասեր և ուսումնասեր այր էր։
4) Բյուզանդացիների կողմից դավադրաբար սպանվել է։
5) Արուճում ձեռնարկել է իշխանական պալատի կառուցումը։
6) Շիրակում հարձակվել է արաբ գլխավոր հարկահանի վրա և խլել ամբողջ հավաքած հարկը։
7) Մասնակցել է Հուստինիանոս I–ի դեմ խռովությանը։

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Արդյունաբերացման նպատակը ԽՍՀՄ–ը մեքենաներ և սարքավորումներ ներմուծող երկրից դրանք արտադրող երկրի վերածելն էր:
2) Ի տարբերություն Արևմուտքի զարգացած երկրների՝ Խորհրդային Միության արդյունաբերացումն սկսվել էր թեթև և սննդի արդյունաբերություններից:
3) Հայ տրոցկիստների առաջին ելույթը երեք գործիչների հրապարակած «Երեքի դեկլարացիան» էր, որը տպագրվեց մամուլում 1927 թվականին:
4) Հնգամյակներով կենտրոնացված պլանավորումն իրականացվել է ԽՍՀՄ–ի գոյության բոլոր տարիներին:
5) ՀՅԴ ինքնավերացման համագումարից հետո Խորհրդային Հայաստանում լուծարվել են դաշնակցության ընդհատակյա կառույցները:
6) Հայաստանում 1945-1952 թթ. քաղաքական մեղադրանքով բռնությունների է ենթարկվել 15 000 մարդ, որոնց մեկ երրորդը գնդակահարվել է: